



## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Երկրագնդի վրա բնակչության շարունակական աճը բերում է քաղաքների խոշորացմանը, որը իր հերթին նպաստում է Երկրի պինդ շերտի ավելի արագ ձևափոխմանը: Շատ քաղաքներ ունեն 10 միլիոնից ավելի բնակչություն և գրավում են հսկայական տարածքներ: Նման խոշոր քաղաքները և դրանցում գործող բազմաթիվ գործարաններն, իրենց արտադրական նպատակների համար պահանջում են ավելի շար Էներգիա և բնական ռեսուրսներ (մաքուր օդ, խմելու ջուր, թթվածին):

Այսպիսի խոշորացումը բերում է տարածքի կլիմայի փոփոխության, քաղաքներում ավելի տաք է, բարձր է օդի խոնավությունը, ցածր է օդի թափանցիկությունը և Արեգակի լույսը դժվար է ձեռքբերել: Արդյունքում քաղաքների վրա ձևավորվում է տաք և աղտոտված օդի մի յուրօրինակ «գլխարկ»: Օդում առկա խոնավությունը տաք օդի վերնթաղ շարժման միջոցով վեր է բարձրանում, ձանապարհին իր մեջ լուծելով օդում առկա նյութերը՝ ծխի մասնիկներ, փոշի, տարբեր քիմիական նյութերի տարրեր և խտանալով կրկին թափվում քաղաքի վրա **թթվային անձրևի** ձևով:

Թթվային անձրևները ոչ միայն քայքայում են քաղաքների կառույցները, հապկապես մերտադական շինվածքները, այլ և անդառնալիորեն վնասում են բուսական աշխարհին: Աղաքային բուսականությունը, այգիները պահպանելու համար օգտագործվում են լրացուցիչ միջոցներ, սակայն դրանք միշտ չէ, որ արդյունավետ են: Այսպիսի բնակավայրերի բնակչությունը տառապում է շնչառական, մաշկային, տեսողական հիվանդություններով: